ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԲՈՒ-Լ ՖԱՐԱՋ ԳՐԻԳՈՐԻՈՍ ԻԲՆ ԱԼ-ԻԲՐԻԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIII ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Միջնադարյան Հայաստանի և Կիլիկիայի պատմության սկզբնաղբյուրների շարքում հատուկ տեղ են գրավում արաբական (մահմեդական) աղբյուրները, որոնք շատ արժեքավոր տեղեկություններ են պարունակում ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի հայկական թագավորությունների ու իշխանությունների բաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի տարբեր կողմերի մասին։ Սակայն արաբական (մահմեդական) պատմագրության մեջ ինքնուրույն ճյուղ են կազմում արաբալեզու քրիստոնյա (ասորի, ղպտի, հույն և այլն) հեղինակների՝ պատմիչների ու մատենագիրների երկերը, որոնք ներկայացնում են քրիստոնյա արաբական մատենագրությունը[1]։

Քրիստոնյա արաբալեզու պատմիչները և մատենագիրները, մի կողմից, սնվելով ինչպես հունարեն, այնպես էլ արաբերենի թարգմանված հույն և բյուզանդական հեղինակների երկերից, մյուս կողմից՝ մահմեդական (արաբ, պարսիկ և այլն) պատմիչների աշխատություններից, իրենց երկերի մեջ շարունակել են թե՛ արաբական և թե՛ բյուզանդական պատմագրության ավանդույթները։ Բացի դրանից, քրիստոնյա արաբալեզու պատմիչները, ի տարբերություն մահմեդական հեղինակների, իրենց երկերի մեջ մեծ տեղ են հատկացրել քրիստոնեական պետությունների, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների թե՛ քաղաքական և թե՛ եկեղեցական պատմության հարցերին[2] *ու դրանով առատ նյութ մատակարարել արաբալեզու մահմեդական պատմագրությանը։ Այդ իսկ պատճառով նրանց ընձեռած տեղեկություն-*

ներր ոչ միայն անաչառ են ու հավատի, այլև հաճախ բացակայում են մահմեդական հեղինակների պատմագրական երկերում։ Ահա այս տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում քրիստոնյա արաբական մատենագրության խոշոր ներկայացուցիչ, եկեղեցական, մշակութային գործիչ, գիտնական-հանրագիտակ և նշանավոր պատմիչ Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոս (Յուհաննա) իբն Հաուն իբն Թուման (1226—1286 թթ.) պատմագրական երկերը (ասորերեն և արաբերեն լեզուներով)։ Արաբական (մահմեդական) պատմագրության մեջ նա հայտնի է Իբն ալ-Իբրի (բառացի հրեայի որդի), իսկ եվրոպական արևելագիտության մեջ՝ Բար Հեբրեոս (ասոր. Բար Էբրայա տարբերակից) անունով։

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսը ծնվել է Փորր Հայքի Մալաթիա քաղաքում 1226 թ.՝ բժշկի ընտանիքում։ 1246 թ. եպիսկոպոս ձեռնադրվելու ժամանակ նա ստացել է Գրիգորիոս անունը, իսկ փորր հասակում նրան կոչել են Յուհաննա ասորական անունով։ 1244—1253 թթ. նա մի շարք եկեղեցական պաշտոններ է զբաղեցնում Անտիոքում, Գուբասում, Լակաբինում (Մալաթիայի մոտ), 1253 թ. նշանակվում է Հալեպի հակոբիկ ասորական եկեղեցու մետրոպոլիտ, 1260 թ. կորկին դառնում է Հալեպի մետրոպոլիտ և քաղաքի մոնղոլական ալաշարման ու նրա բնակչության կոտորածի ժամանակ ներկա է լինում այնտեղ[4]։ 1264 թ. հունվարի 19-ին Կիլիկիայի Սիս մայրաքաղաքի ասորական եկեղեցական ժողովում Աբու-լ Ֆարաջը ձեռնադրվում է «արևմուտքի և արևելքի մաֆրիան (մափրիան)», այսինքն՝ արևելքի երկրների հակոբիկ ասորական եկեղեցու առաջնորդ, Անտիոքի պատրիարքի ընդհանուր փոխանորդ։ Նրա ձեռնադրության արարողությանը ներկա էին Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում Ա (1226—1270), վերջինիս որդիները, եղբայրները, հայոց պետության անվանի գործիչներ, հայոց եկեղեցու եպիսկոպոսներ, հայ գիտնականներ, մշակութային գործիչներ, ասորական հակոբիկ եկեղեցու թեմերի առաջնորդներ, վարդապետներ, հայ և ասորի հասարակության հոծ զանգված[5]։

1264 թ. մինչև կյանքի վերջը՝ 1286 թ. Աբու-լ Ֆարաջը կատարել է «Արևելքի մաֆրիանի» պարտականությունը[6], շրջել է իր հովվապետության ներքո գտնվող բոլոր թեմերում (18 եպիսկոպոսական թեմեր), որոնք գտնվում էին Իրանի մոնղոլական իլխանների տիրապետության տակ, այդ թվում՝ Ասորիքի, Միջագետքի, Պարս-

կաստանի, Ատրպատականի, Իրաքի, Փոքր Ասիայի, Հարավային Հայաստանի և Կիլիկիայի (Անտիոքի) տարածքում[7]:

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսը որպես ասորական եկեղեցու առաջնորդ և մշակութային գործիչ լավ հարաբերությունների մեջ է եղել հայոց առաքելական եկեղեցու առաջնորդների, աշխարհիկ ու իշխանական դասի ներկայացուցիչների հետ: Այդ մասին է վկայում հենց նրա ձեռնադրության փաստը կիլիկյան պետության մայրաքաղաք Սսում, հայ հասարակության աշխարհիկ ու հոգևոր դասերի բարձրաստիճան մարդկանց ներկայությամբ: Նա համագործակցել է նաև հայ եկեղեցու ազատավորների հետ, համատեղ դավանաբանական պայքար մղել նեստորականների և քաղկեդոնականների դեմ, այդ ասպարեզում վայելել է Կիլիկիայի հայոց թագավորների ու իշխանների հովանավորությունը:

Աբու-լ Ֆարաջ Գրիգորիոսի հարուստ մատենագրական ժառանգությունից մեզ հասել են նրա պատմագրական երկերը: Ասորերեն լեզվով նա գրել է ընդարձակ «Համընդհանուր (Տիեզերական) պատմություն» (1276 թ.), որը հայտնի է «Թարիխ ալ-Զաման» խորագրով և կազմված է երկու մասերից: Առաջին մասը՝ «Աշխարհիկ (քաղաքական) պատմությունը» Եվրոպայում հայտնի է «Ասորական ժամանակագրություն»[8], իսկ երկրորդ մասը՝ «Եկեղեցական պատմությունը» Եվրոպայում հայտնի է «Եկեղեցական ժամանակագրություն» խորագրով: «Եկեղեցական պատմությունը» իր հերթին կազմված է երկու մասից, որը թարգմանվել է լատիներեն և հրատարակվել Եվրոպայում[9]: «Եկեղեցական պատմությունը» (ասորական) ունի նաև համառոտ արաբերեն թարգմանություն, որը հրատարակվել է Բեյրութում 1923—1924 թթ.[10]:

Աբու-լ Ֆարաջի ասորական «Համընդհանուր պատմության» առաջին մասը հայտնի է նաև որպես աշխարհիկ պատմության ընդարձակ խմբագրություն, քանզի հեղինակը կյանքի վերջին տարում՝ 1286 թ. (հուլիս ամիսը) վերամշակել է իր ասորական աշխարհիկ (քաղաքական) պատմությունը, հարստացրել նոր աղբյուրների նյութերով և շարադրել է արաբերեն լեզվով՝ իր գրչակից ընկերների և, հավանաբար, տեղի (Մարաղա քաղաքի) իշխանավորների խնդրանքով: Սակայն անսպասելի հիվանդության պատճառով հեղինակը չի հասցրել արաբերենի վերածել ասորական բնագրի վերջին երեք էջերը, այդ իսկ պատճառով նրա աշխարհիկ պատ-

մության արաբական խմբագրությունը, որը հայտնի է որպես համառոտ խմբագրություն, մնացել է առանց խորագրի[11]:

Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությունը[12], ինչպես նաև 13-րդ դարի քրիստոնյա արաբ պատմիչ Ջիրջիս ալ-Մաքին Իբն ալ-Ամիդի «Սարակինոսների (մահմեդականների) պատմությունը»[13] եղել են առաջին պատմագրական երկերը, որոնք եվրոպական վերածննդի նախօրեին թարգմանվել են լատիներեն և դրավել եվրոպացի հետազոտողների ուշադրությունը[14]: Ընդ որում, Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությունը առաջին անգամ հրատարակվել է լատինական թարգմանությամբ և ուսումնասիրությամբ է. Պոքոքի կողմից 1650—1663 թթ. հետևյալ խորագրով՝ «Թարիխ Մուխթասա ալ-Դուվալ»[15] (Պետությունների համառոտ պատմություն): Ըստ երևույթին, Աբու-լ Ֆարաջի պատմության արաբական տարբերակը արաբագետ է. Պոքոքը համարել է որպես ասորական խմբագրության համառոտ տարբերակ և այդ ձևով էլ դիտական շրջանառության մեջ մտցրել:

Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ (քաղաքական) պատմության» նորագույն հետազոտողները գտնում են, որ այդ պատմության արաբական խմբագրության «Թարիխ մուխթասար ալ-Դուվալ» (Դինաստիաների համառոտ պատմություն) առաջարկված խորագիրը չի համապատասխանում երկի բովանդակության և հատկապես արաբական խորագրի «Մուխթասար» (համառոտ, համառոտագրում) և նրա լատինական, «Կոմպենդիում» (համահավաք) որակմանը: Նրանք իրավացիորեն նշում են, որ Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության արաբական խմբագրությունը ոչ միայն ասորական խմբագրության համառոտ շարադրանքը չէ, այլ նոր աղբյուրների նյութերի հիման վրա, այլադավան մահմեդական ընթերցողների համար դրված և այլ նպատակներ հետապնդող աշխատություն է, որը միանգամայն տարբերվում է նույն հեղինակի պատմության ասորական խմբագրությունից: Որակապես նրանք տարբեր աշխատություններ են[16]:

Աբու-լ Ֆարաջի՝ 1650 թ. է. Պոքոքի կողմից հրատարակված աշխարհիկ պատմության արաբական բնագիրը 1783 թ. թարգմանվել է գերմաներեն և հրատարակվել Գ. Բաուերի կողմից[17]: Ավելի ուշ՝ 1890թ. հայտնի բնագրագետ Անտոն Մալիհանին բազմաթիվ նոր

ձեռագրերի հիման վրա հրատարակեց Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ պատմության» արաբերեն քննական բնագիրը[18], որը լրամշակվել, սրբագրվել, ծանոթագրվել ու վերահրատարակվել է Բեյրութում նույն Ա. Սալիհանիի կողմից[19] 1958 և 1983 թթ.[20]:

Իսկ Աբու-լ Ֆարաջի «Աշխարհիկ պատմության» (ասորական ընդարձակ խմբագրության) 10-րդ և 11-րդ գլուխները, որոնք նվիրված են Արբասյան խալիֆաներին, սելջուկյան սուլթաններին և մոնղոլական տիրակալներին, առաջին անգամ թարգմանվել են արաբերենի Իսհակ Արմալեհի կողմից և հրատարակվել Բեյրութում 1986 թ.[21]: Արտրական թարգմանության համար հետաղոտող Իսհակ Արմալեհը համեմատել է ոչ միայն Աբու-լ Ֆարաջի արաբական և ասորական խմբագրությունների բնագրերը, այլև հեղինակի օգտագործած տարաբնույթ աղբյուրների բուն նյութերը[22]:

Այսպիսով, սույն հոդվածի սահմաններում փորձ է արվում Աբու-լ Ֆարաջի աշխարհիկ պատմության թե՛ արաբական և թե՛ ասորական բնագրերի նյութերի հիման վրա քննության ենթարկել XIII դարի 20—50-ական թվականների Կիլիկիայի հայոց պետության ռազմաքաղաքական պատմության դեպքերը։

Այսպես, Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ Մեծագործի (1198—1219) մահից հետո գահի շուրջ տարբեր իշխանների ու խմբավորումների միջև պայքար ծավալվեց, և գահը թափուր մնաց մոտ վեց տարի։ Սակայն Լևոն Բ դեռևս իր կենդանության օրոք Կիլիկյան պետության թագաժառանգ էր նշանակել իր մանկահասակ դստերը՝ Ֆաբելին և հոր կամքով նրա խնամակալներ էին նշանակվել, ինչպես այդ մասին հաղորդում է ասորի հեղինակ Աբու-լ Ֆարաջը, «ծովամերձ ամրոցների տեր Սիր Ադան պայլը (սպարապետը) և Լամբրոն ամրոցի տեր Հեթում իշխանի որդի Կոստանդինը»[23]: Ընդ որում, Սիր Ադան պայլը ոչ միայն Ֆաբելի խնամակալն էր, այլև հայոց թագավորության կառավարիչը (այսինքն՝ նաև պետության խնամակալ) և երկիրը կառավարել է մոտ երկու տարի[24]: Սակայն նույն Աբու-լ Ֆարաջի վկայությամբ 618/1221 թ Սիր Ադան պայլը (բալի) զոհվում է Սիս քաղաքի մոտակա լեռնային կիրճում՝ իսմայիլականների դեմ մղած ճակատամարտում[25]: Աբու-լ Ֆարաջի այս վկայությունը հաստատվում է նաև Միքայել Ասորու և Սմբատ Սպարապետի տվյալներով. «Որոյ նենգել Ագնին ըստ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց, քանզի Հոռոմ էր ազգաւ,

խորհէր ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն վասն որոյ... սպանաւ ի Հաշիշեացն[26] սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն»[27]: Հայ պատմիչը չի տալիս Գաստոն ամրոցի տեր Սիր Ադան պայլի սպանության տարեթիվը, սակայն Արու-լ Ֆարաջն այն տեղադրում է 1221 (հիջրայի 618) թվականի դեպքերի մեջ: Եթե Սիր Ադանը երկու տարի է կառավարել՝ Լևոն Բ թագավորի մահվանից (1219 թ.) հետո, ապա նրա սպանությունը պետք է կատարված լինի 1221 թ., որը ընդունելի է և համահունչ Արու-լ Ֆարաջի տված 1221 թ. տարեթվի հետ:

Այնուհետև Արու-լ Ֆարաջը հիշատակում է, որ «ծովափնյա ամրոցների տեր Սիր Ագանի սպանությունից հետո նրան հաջորդում է պարոն (բարոն) Կոստանդին պայլը (բալի), որը Լևոն թագավորի քեռի՝ պարոն Վասիլի (Բասիլ) որդին է»[28]: Նա մնում է որպես թագաժառանգ Զաբելի միակ խնամակալը և երկրի փաստական կառավարիչը:

1220 թ. աշխուժանում են ինչպես Կիլիկիայի ներսում առկա կենտրոնախույս ուժերը, այնպես էլ երկրից դուրս գտնվող օտար (հույն, լատին) թագավորներն ու իշխանները, որոնք ձգտում էին տիրել հայոց թագավորական գահին[29]: Երկրի ներսում դլուխ բարձրացրին Տարսոնի և Մսիսի հույն և հայ իշխանները, որոնք Կոռիկոս ամրոցի տեր Վահրամ (Մարաջախտ) իշխանի ղեկավարությամբ խռովություն կազմակերպեցին Կոստանդին պայլի ղեկավարած կենտրոնական իշխանության դեմ: Նրանց էր միացել նաև Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդը: Արու-լ Ֆարաջը 618/1221 թ. դեպքերի մեջ մանրամասն տեղեկություններ է հաղորդում այս խռովության մասին: Նա նշում է, որ խռովարարները գրավեցին Տարսոնը, Ադանան և հարձակվեցին Մսիսի (Մասիսա) վրա: Սակայն պարոն Կոստանդին պայլը հավաքեց իր զորքերը և շարժվեց խռովարարների դեմ: Վահրամը իր զինակիցների հետ ճակատամարտում փախուստի է դիմում, Կոստանդին պայլը հետապնդելով ձերբակալում է նրանց, այդ թվում, Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդին, Կոռիկոսի տեր Վահրամ իշխանին և նրա կնոջը, ապա նրանց սպանում[30]: Ըստ հայ մատենագիրների տվյալների, իշխան Կոստանդին պայլը ձերբակալում է խռովարարներին ու բանտարկում Տարսոնի բերդում, որտեղ նրանք մահանում են[31]:

Գահի շուրջ բորբոքված կռիվների մեջ իշխան Կոստանդին պայ-

յր հաղթանակ է տանում ընդդիմադիրների նկատմամբ, սակայն չի կարողանում օգավել տարած հաղթանակի պտուղներից։ Նա դեռևս վախենում էր հյնարոնախույս հայ իշխանների ուժեղ դիմադրությունից, այդ իսկ պատճառով խուսափում է իշխանության գլուխ դնել իր որդի Հեթումին՝ առաջ քաշելով նրա թեկնածությունը որպես թագաժառանգ Զաբելի փեսացու։ Պատմաբան Վ. Տեր-Ղևոնդյանը արդարացիորեն նշում է, որ Կիլիկիայի հայ իշխանների մեջ դեռևս թաքնված թշնամանք կար Ռուբինյան տոհմի նկատմամբ։ Այդ էր պատճառը, որ 1221 թ. հրավիրված ժողովում Կոստանդին պայլը չհամարձակվեց իր որդիներից որևէ մեկի թեկնածությունը տոտչադրել որպես թագաժառանգ Զաբելի փեսացու[32]։ Կոստանդին պայլը, մնալով որպես Զաբելի միակ խնամակալը ու երկրի փաստական կառավարիչը, ձգտում էր լուծել թագաժառանգ Զաբելի ամուսնության և, հետևաբար, դահակալության հարցը։

Այդ ծանր օրերի, Զաբելի փեսացուի ընտրության շուրջ ստեղծված բարդ իրավիճակի մասին 618/1221 թ. դեպքերի մեջ Աբու-լ Ֆարաջը հաղորդում է. «Կոստանդին պայլը հույս ուներ, որ հայ իշխանները մատնացույց կանեն իր հինգ որդիներից մեկին՝ որպես Լևոն թագավորի դստեր (Զաբելի—Ա. Խ.) փեսացու, նրա հետ ամուսնանալու և թագավորության հարցը լուծելու նպատակով։ Սակայն նրանք ոչ մի բան չառաջարկեցին այդ կապակցությամբ։ Նա հուսախաբ եղավ նրանց վերաբերմունքից և փոխեց իր քաղաքականությունը նրանց նկատմամբ։ Իսկ հայ իշխանները լուր ուղարկեցին և (Կիլիկիա) հրավիրեցին Միականի պրինցի (իշխան) որդի Ֆիլիպին և նրան պսակեցին Լևոն թագավորի դուստր Զաբելի (Իգաբել) հետ ու նրան հանձնեցին Կիլիկիայի (թագավորության) կառավարումը»[33]։

Այսպիսով, 1221 թ.[34] թագաժառանգ Զաբելը ամուսնացավ Անտիոքի իշխան Բոհեմոնդի 16-ամյա որդի Ֆիլիպի հետ, որը, ըստ պայմանավորվածության, երկիրը պիտի կառավարեր՝ հետևելով հայկական կենցաղին և հայոց եկեղեցու ծեսերին։ Սակայն Ֆիլիպի դահակալությունը Կիլիկիայում երկար չի տևում, քանի որ, ինչպես այդ մասին վկայում են Սմբատ Սպարապետը և Կիրակոս Գանձակեցին, երկու տարի անց նա խախտում է վերոհիշյալ պայմանները և ոչ միայն մեկուսացնում է Կոստանդին պայլին ու հայ իշխաններին, այլև իր հոր խորհրդով Անտիոք ուղարկում «զթագն

Լևոնի արքայի և զպաղատն արքունական, զոր յերևելի աւուրս կանգնէի, և այլ գանձս ոսկւոյ և արծաթոյ»[35]:

Ֆիլիպի երկու տարվա (1221—1223) գահակալության ու նրա՝ հայ իշխանների նկատմամբ վարած քաղաքականության մասին Աբու-լ Ֆարաջը մանրամասն տեղեկություններ է հաղորդում, որոնք լրացնում ու ամբողջացնում են հայ հեղինակների տված պատկերը: Նա գրում է, որ Ֆիլիպը երկու տարի «անխելք» քաղաքականություն է վարել հայ իշխանների նկատմամբ: Ձգտելով հայերին վերացնել ու նրանց տեղը «ֆրանկներ» բերել, նա իր դեմ բորբոքեց հայերի զայրույթը, որոնք զլշացել էին նրան թագադրելու համար և այլևս չէին հանդուրժում նրա վարքը: Հայ իշխանները խնդրեցին Կոստանդին պայլին՝ Ֆիլիպից իրենց ազատելու: Վերջինս կատաբում է նրանց կամքը և գիշերով առևանգում է Ֆիլիպին, ձերբակալում, Թիլ Համդունից տեղափոխում Սիս և այնտեղ բանտարկում: Նրա հայրը՝ Բոհեմոնդը փորձում է բանտարկությունից ազատել որդուն, և հայերին առաջարկում, որ իր որդուն ազատելու դեպքում ինքը կհրաժարվի Կիլիկիայի գահից: Այդ հարցով հայրը բազում պատվիրակներ է ուղարկում, ապա ինքն է զալիս որդուն ազատելու, սակայն ապարդյուն: Բոհեմոնդին հայտնում են, որ Ֆիլիպին տեղափոխել են Ամուդ ամրոցը, որտեղ նա թույն է խմել և մահացել[36]: Հայ հեղինակների տեղեկությունները Ֆիլիպի գահակալության, նրա վարած քաղաքականության ու վախճանի մասին, ընդհանուր առմամբ, համընկնում են Աբու-լ Ֆարաջի հաղորդումների հետ: Սակայն Սմբատ Սպարապետը և Կիրակոս Գանձակեցին վկայում են, որ Ֆիլիպը մահացել է Թիլ (Թիլ Համդուն) ամրոցում[37], և ոչ թե Ամուդ (Ամուտա) ամրոցում, ինչպես վկայում է ասորի հեղինակը. վերջին տարբերակը ավելի հավանական է թվում մեզ: Վ. Տեր-Ղևոնդյանը Ֆիլիպի մահվան տարեթիվը տեղադրում է 1224—1225 թթ. միջև[38], մինչդեռ ավելի հավանական է թվում 1226 թ., քանզի այդ տարեթիվը հաստատվում է նաև Իբն ալ-Ասիրի տվյալներով[39] (Հիջրայի 623 թ.=1226 թ.):

Հայ պատմիչները 1224—1226 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների մասին գրեթե ոչինչ չեն հաղորդում, մինչդեռ արաբալեզու հեղինակների տեղեկությունները նոր փաստեր են արձանագրում, որոնք վստահություն են ներշնչում: Այսպես, Իբն ալ-Ասիրի վկայությամբ 1225 թ. (622) վերջերին Իկոնիայի սուլթան

Քայ Կուրտգր Հյուսիսից Կիլիկիա է ներխուժում, չորս բերդ է դրավում, սակայն ձմեռը վրա հասնելուն պես, ստիպված Կիլիկիայից հետ է քաշվում և դնում է իր երկիրը[40]:

Բացի դրանից, Իբն ալ-Ասիրը վկայում է, որ 623 թ. (1226 թ. հունվարի 2—1226 թ. դեկտեմբերի 2) Կիլիկիա է ներխուժում վերոհիշյալ Ֆիլիպի հայր Բոհեմոնդը և պահանջում է հայ իշխաններից որդուն աղատ արձակել, սակայն վերջիններս մերժում են նրան։ Բոհեմոնդը առաջ է շարժվում, «պատերազմում էր» հայ իշխանների հետ, սակայն ապարդյուն, վերադառնում է իր երկիրը[41]: Իբն ալ-Ասիրը մանրամասն տեղեկություններ է տալիս Անտիոքի իշխան Բոհեմոնդի և Իկոնիայի սուլթան Քայ Կուբադի (1219—1237) միջև ձեռք բերված համաձայնության մասին՝ Կիլիկիա ներխուժելու համար։ Մյուս կողմից, Կիլիկիայի փաստական կառավարիչ Կոստանդին պայլը թշնամիների հարձակմանը դիմագրավելու համար կարողացել էր իր կողմը գրավել Հալեպի Այյուբյան սուլթաններին և նույնիսկ «զորք ու զենք» ստանալ նրանցից[42]:

1225—1226 թթ. Կոստանդինը կարողանում է դիմագրավել հյուսիսային և հարավային թշնամիների հարձակումներին, երկու անգամ հաղթանակ տանել Անտիոքի իշխան Բոհեմոնդի դեմ և իր կողմը գրավել հայոց կաթողիկոս Կոստանդինին և խոշոր ավատատերերին[43]: Կիլիկիայում իրադրությունը փոխվել էր, Կոստանդին պայլը կրկին առաջ քաշեց Զաբելի համար փեսացու ընտրելու հարցը։

Իշխանական խորհուրդը երկրի կառավարիչ նշանակեց Կոստանդին պայլին (1224—1226), սակայն թագավորական գահը դարձյալ թափուր մնաց։ Կոստանդինը առաջադրում է գահի համար թեկնածու ընտրելու հարցը։ Հայոց կաթողիկոսի և հայ «մեծամեծ» ֆեոդալների համաձայնությամբ այս անգամ որոշվեց Զաբելին ամուսնացնել Կոստանդին պայլի որդի Հեթումի հետ և միաժամանակ նրան ճանաչել Կիլիկիայի թագավոր[44]: Զաբել թագուհին սկզբից չհամաձայնվեց ամուսնանալ Հեթումի հետ, քանզի վերջինս մանկահասակ պատանի էր։ Այդ պատճառով նա ապստամբեց և մորը տեսնելու պատրվակով (մայրը Կիպրոսի խաչակիրներից էր) «Զոդաւ ի Սելևկիա առ Ֆրանկսն»[45] հյուրնկալների հոգևոր ասպետական օրդենի Պարգևական ամրոց։ Խիստ զայրացած Զաբելի արարքից և խաչակիրների վերաբերմունքից, հայ իշխանները պատեհ

առիթ գտան պատժելու հյուրընկալների օրդենին[10]: Ըստ հայ մատենագիրների, դեպքերի հետագա զարգացումը այսպես է ընթացել։ Կոստանդինի գլխավորությամբ հայկական բանակը պաշարեց Սելևկիան։ Հյուրընկալները չդիմագրեցին, հանձնեցին բերդը և թագուհուն[7]: Սակայն Աբու-լ Ֆարաջը 1225 թ. (հիջրայի 622 թ.) դեպքերի ընթացքը այլ կերպ է ներկայացնում. «Այդ ժամանակ-ընթացքում պարոն (տիրակալ) Կոստանդին պայլը պատվիրակ ուղարկեց մեր. նորին սրբություն պատրիարք Իգնատիոսի (1222—1252) ու հայոց կաթողիկոս Կոստանդինի մոտ այն խնդրանքով, որպեսզի երկուսով գնան Լևոն թագավորի դստեր (Զաբելի—Ա. Խ.) մոտ. Սելևկիայից նրան հետ բերեն, հաշտեցնեն ու նրա հետ համաձայնության գան՝ բոլոր քրիստոնյաներին օգուտ տալու նպատակով։ Մինչդեռ Հռոմների երկրի (Փոքր Ասիա—Ա. Խ.) տեր սուլթան Ալա ալ-Դինը օգտագործեց նրանց (հայերի) մեջ եղած տարաձայնությունների առիթը և գրավեց Կիլիկիայի շատ բերդեր։ Վերոհիշյալի համաձայն, երկու վեհափառները գնացին նրա մոտ և նրանից համառորեն պահանջեցին հետ գալ ու խորհուրդներ տվեցին նրան։ Սակայն նա ոչ միայն չհամոզվեց, այլև մեղադրեց երկու վեհափառներին էլ, որ իրենք դաշնակցել են անմեղ արյուն թափող դահճի (այսինքն՝ Կոստանդին պայլի—Ա. Խ.) հետ։ Նրանք չկարողացան հակազդել թագուհու ասածները, թողեցին նրան և վերադարձան առանց որևէ արդյունքի։ Դրանից հետո, Կոստանդին պայլը անձամբ գնաց նրա մոտ և հյուրընկալների (ֆրեր) միաբաններին խնդրեց, որ նրան (թագուհուն—Ա. Խ.) հարկադրաբար հանձնեն իրեն։ Նրանք պատասխանեցին. «Մեր տները և ամրոցները քրիստոնյաների ապաստարաններ են, և մենք չենք կարող հանձնել թագուհի մի կնոջ, որը մեզնից օգնություն է հայցել»։ Պայլը խորամանկության դիմեց և նրանցից գնեց ամրոցը իր ողջ ունեցվածքով, ապա նրանց հանել տվեց այնտեղից։ Կարգադրելու և արգելելու իրավունքը (իշխանությունը) իր ձեռքը վերցնելով, բռնեց թագուհու ուսից, հետ բերեց ու հարկադրաբար տեղափոխեց Տարսոն (Տարսուս)։ Այնուհետև նա հրավիրեց պատրիարքներին, եպիսկոպոսներին ու քահանաներին և նրա պսակադրությունը կատարեց իր որդի Հեթումի հետ։ Հեթումին նրանք Կիլիկիայի թագավոր հռչակեցին՝ հունաց 1537 թվականի հունիսի 14-ի հոգեգալստյան (տոնի) կիրակի օրը (1226 թ.)։ Զաբել (Իզաբել) թագուհին տաս տարի շա-

ռունակ թույլ չտվեց Հեթում թագավորին, որ իրեն ճանաչի։ Դրանից հետո, նա համաձայնության եկավ նրա հետ ու նրա համար տայաններ ու աղչիկներ ծննդաբերեց»[48]:

Այսպիսով, 1226 թ. Հեթումի և Զաբելի ամուսնությամբ վերջացավ Հեթումյանների և Ռուբինյանների երկարատև պայքարը իշխանության համար, և այդ երկու իշխանական տները միավորվեցին, իշխանության գլուխ անցավ Հեթումյանների հարստությունը։ Երկրում իշխանությունն ամրապնդելու համար պետական բարձր պաշտոններն ու գործակալությունները կենտրոնացվեցին Հեթումյան առհմի ներկայացուցիչների ձեռքում։ Հեթումի հայրը՝ Կոստանդինը, նշանակվեց թագավորահայր և ավագ պարոն։ Նրա եղբայրներին հանձնվեցին խոշոր գործակալությունները։ Սպարապետությունը տրվեց ավագ եղբորը՝ Սմբատին։ Սպառազինման և մատակարարման գծով բանակի հրամանատարությունը (մարաշախտ)՝ Լևոնին, միաժամանակ նրան տրվեց իշխանաց իշխանի կամ պարոնաց պարոնի բարձր պաշտոնը։ Օշինը նշանակվեց պայլ, Բարսեղը՝ վանահայր, Սսի արքեպիսկոպոս և արքեպիսկոպոսյան ատյանի նախագահ[49]:

Մոնղոլական արշավանքներից և 1243 թ. Քյոսեդաղի՝ «Զմանկատուկ քաղաքագյուղի» մոտ մոնղոլական զորքերի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտում սելջուկների պարտությունից հետո Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում փոխվեց ուժերի հավասարակշռությունը և քաղաքական իրավիճակը։ Կիլիկյան հայկական պետության ղեկավարները մոնղոլների ասպատակություններից երկիրը զերծ պահելու նպատակով որոշեցին վերանայել իրենց քաղաքականությունը հարևան պետությունների հետ և որդեգրեցին սելջուկներին չօգնելու ու մոնղոլների հետ բարեկամություն հաստատելու ճիշտ քաղաքականությունը[50]։ *Այդ կապակցությամբ մոնղոլների հետ բանակցելու և հայ-մոնղոլական դաշինք կնքելու համար հայկական պատվիրակություն ուղարկվեց Կարակորում (Մոնղոլիա)՝ Գույուկ-խանի մոտ։ Այդ պատվիրակության ուղևորության ու նրա վարած բանակցությունների արդյունքների մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Աբու-լ Ֆարաջը իր աշխարհիկ պատմության թե՛ ասորական և թե՛ արաբական խմբագրությունների մեջ։ Ըստ Աբու-լ Ֆարաջի ասորական ժամանակագրության, հայ պատվիրակությունը*

Մոնղոլիա է մեկնել հիջրայի 644 թ. (1246 թ.) մոնղոլական նոր գահակալի ընտրության արարողությանը մասնակցելու և նրա հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու համար։ Հայկական պատվիրակությունը, ըստ Աբու-լ Ֆարաջի, գլխավորում էր Հեթում (Ա) թագավորը։ Կարակորում էին եկել նաև մի շարք այլ երկրների պատվիրակություններ, այդ թվում Վրաստանից՝ «Մեծ և Փոքր Դավիթները»։ Մոնղոլական պետության նոր գահակալ ընտրվեց Գույուկ-խանը, որը, «իրավիճակը հանդարտվելուց հետո սկսեց լավ վերաբերվել [այլ իշխանավորների հետ—Ա. Խ.]»։ Այնուհետև 645/1247/8 թթ. Գույուկ-խանը որպես Ռում երկրի (Փոքր Ասիա), Վրաստանի (Գուրջ), Մոսուլի, Ասորիքի և Կիլիկիայի ընդհանուր կառավարիչ նշանակեց Իլչիգիդային[51]։ Ապա Հեթում թագավորին, վրացիներին և ֆրանկներին պատիվ անելով ճանապարհեց դեպի իրենց երկրները[52]։

Ուշագրավ է, որ նույն այս դեպքերի մասին Աբու-լ Ֆարաջը հաղորդում է նաև իր արաբական ժամանակագրության մեջ, սակայն այստեղ նա այլ տեղեկություններ է տալիս հայ պատվիրակության գործունեության և կազմի մասին։ Այսպես, նա հաղորդում է, որ 446/1246 թ. գարնանը մոնղոլների համաժողովին մասնակցելու համար հավաքվել էին, ինչպես խանի (կաան) որդիները, թոռները և մոնղոլ ամիրաները, այնպես էլ ոչ-մոնղոլ «մեծամեծերը» (իշխանավորները՝ Միջին Ասիայից (Մավերանահր), Թուրքեստանից, Խորասանից, Իրաքից, Լուրեստանից, Ատրպատականից (Ադարբայջան), Շիրվանից, Փոքր Ասիայից (Ռում), Կիլիկյան Հայաստանից (ալ-Արման), ընդ որում, Կիլիկյան Հայաստանից նա նշում է, որ մասնակցում էր «Հեթում (Հաթիմ) թագավորի եղբայր Գունդստաբլը», իսկ Վրաստանից (Գուրջիստան) «Մեծ և Փոքր Դավիթները»[53]։

Աբու-լ Ֆարաջի երկու ժամանակագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ հայկական պատվիրակությունը Մոնղոլիա (Կարակորում) է մեկնել 446/1246 թ., ոչ թե Հեթում թագավորի, այլ նրա եղբայր՝ Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) գլխավորությամբ։ Ընդ որում, հայ պատվիրակության այս առաջին ուղևորությունը հայկական աղբյուրները թվագրում են ոչ թե 1246, այլ 1248 թ.[54]։ Ինչպես երևում է, Սմբատ Սպարապետի գլխավորած պատվիրակությունը Մոնղոլիայում նախապատրաստել է Հեթում Ա

թագավորի հետագա այցելությունը, համաձայնեցրել է փոխադարձ հարաբերությունները, ազատել Կիլիկիայից պահանջված հարկի չափերը և բարեկամության դաշինք կնքել[55]: Դրա փոխարեն մոնղոլները խոստացել են ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային՝ Իկոնիայի սուլթանության հարձակումների ժամանակ և, ինչպես վկայում է Աբու-լ Ֆարաջը, Հեթում թագավորի եղբայրը (Սմբատ Սպարապետը) Գոյուկ-խանից ստացավ «Դաշինքի և անվտանգության յարլիղ»[56]: Այս փաստը հաստատվում է նաև Գրիգոր Ակներցու (Սաղաքիա Արեղայի) ավյալներով՝ «Սղամիշ յարլախ և փափրայս ոսկիս»[57]:

Աբու-լ Ֆարաջի արաբական ժամանակագրությունը, ըստ էության, խոսում է 1246 թ. հայկական պատվիրակության առաջին այցելության մասին՝ Սմբատ Սպարապետի գլխավորությամբ[58], մինչդեռ նրա ասորական ժամանակագրությունը խոսում է 2-րդ հայկական պատվիրակության՝ Մոնղոլիա կատարած այցելության մասին Հեթում Ա թագավորի գլխավորությամբ, որի մասին ասորի պատմիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում։

Հետազոտողները, հիմք ընդունելով հայ պատմիչների տեղեկությունները Հեթում Ա թագավորի՝ մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում կատարած այցի մասին, այդ ուղևորությունը թվագրում են 1254 թ.[59]։ Սակայն Աբու-լ Ֆարաջի տվյալները թույլ են տալիս վերանայելու Հեթում Ա թագավորի այցելության տարեթիվը։ Այս կարևոր այցելության մասին ասորի մատենագիրը տեղեկություններ է տալիս թե՛ ասորական և թե՛ արաբական ժամանակագրությունների մեջ։ Ըստ Աբու-լ Ֆարաջի արաբական ժամանակագրության, Հեթում Ա թագավորը Մոնղոլիա է մեկնել Բաթու-խանի միջոցով ստացած հրավերով, 650 [1252 թ. մարտի 14—1253 թ. մարտի 3—սեպտեմբերի 1563 թ.] հինգշաբթի օրվա զատիկի հաղորդությունն առնելուց հետո և ճանապարհ է ընկել խաչվերացի տոնի ուրբաթ օրը՝ Սիս քաղաքից[60]: Նույն այս տեղեկությունը ամենայն ճշգրտությամբ բերվում է նաև ասորական ժամանակագրության մեջ[61]:

Հայ պատվիրակության առաջին այցը Սմբատ Սպարապետի գլխավորությամբ, ինչպես նշվեց, կատարվել է 1246 թ., որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Հեթում Ա-ի՝ Կարակորում կատարելիք այցելության մասին։ Սակայն այս այցելու-

թյունը ձգձգվել է, ինչպես արդարացիորեն նկատել են հետազոտողները, ոչ միայն այն պատճառով, որ Իկոնիայի սուլթանը հարձակում է գործել Կիլիկիայի վրա, այլ որ XIII դարի 50-ական թթ. սկզբին Կարակորումում պայքար էր ծավալվել գահի և իշխանության համար մոնղոլական տարբեր տիրակալների միջև[62]: Այդ պայքարը վերջացավ 1251 թ. հուլիսի 3-ին մոնղոլական կուրուլթայում (համաժողովում) Մանգուին (Մոնգե, Մենգյու) հռչակելով մեծ խան (կաան) Մոնղոլիայում և Հյուսիսային Չինաստանում[63]: Բացի դրանից, Չինգիզ խանի որդի Տուլուի որդի Մանգու-խանը, Գույուկի մահից (1249 թ.) հետո դարձավ Չինգիզյանների նոր ճյուղի՝ Մանգուի ճյուղի կամ դինաստիայի հիմնադիր[64]: Դրա հետ միասին, Հեթում Ա թագավորի այցի ուշացման պատճառներից է նաև Զաբել թագուհու մահը, որը տեղի է ունեցել հենց 1252 թ. (հունվար), ինչպես վկայում են հայկական աղբյուրները[65], և ոչ թե 1251 թ. հունվար ամսին (հիջրայի 648 և սելևկյան տոմարի 1562 թ.), ինչպես այդ մասին որոշակիորեն վկայում է Աբու-լ Ֆարաջը[66]:

Ուշագրավ են նաև Աբու-լ Ֆարաջի տեղեկությունները Հեթում Ա թագավորի այցելության ուղերթի և գաղտնիության հանգամանքի մասին: Ըստ նրա, հայոց թագավորը իր ուղևորությունը կատարել է բուն Հայաստանի վրայով, ընդ որում, նա գաղտնի է ճամփորդել՝ ծառայի կերպարանքով զգեստափոխված, սուրհանդակի և թիկնապահ օգնականի ուղեկցությամբ, անցել է Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներով (Կեսարիա, Սեբաստիա, Երզնկա և այլն) մինչև Վրաստանի սահմանները: Այդ ընթացքում հայ թագավորը զգուշացել է Իկոնիայի սուլթանների թշնամական վերաբերմունքից և դավադրություններից, սակայն Վրաստանի սահմանն անցնելուն պես բացահայտել է իր ինքնությունը: Նրա ուղևորությունը տևում է երեքուկես տարի[67] (այսինքն՝ Սիս մայրաքաղաքից մեկնելու օրվանից մինչև վերադարձը Կիլիկիա): Այս բոլորի մասին իրեն պատմել է հենց Հեթում թագավորը՝ Սսում կայացած հանդիպման ժամանակ, խոստովանում է Աբու-լ Ֆարաջը[68]:

Հեթում Ա թագավորի՝ գեպի Մոնղոլիա կատարած ուղևորությունը Աբու-լ Ֆարաջը անդրադառնում է նաև այլ կապակցությամբ: Այսպես, 653(1255 թ.) դեպքերի մեջ նա հաղորդում է. «Այս տարում (հիջրայի 653, հունական 1566 և քրիստոնեական 1255) Բայջու Նոյինի (Նոյոն) ուղեկցությամբ Կիլիկիա ժամանեց Հեթում թա-

գավորը, որը վերադարձավ Մեծ խանին ծառայություն մատուցելուց (այցելությունից) և իր հայրենիքը հասավ սեպտեմբերի 1-ի ուրբաթ որը ու քրիստոնյա ժողովուրդը մեծ ուրախություն ապրեց»[69]: Աբու-լ Ֆարաջի այս հաղորդումը հաստատվում է նաև Կիրակոս Գանձակեցու տվյալներով, որի համաձայն, Հեթում թագավորը Հայաստան (Կիլիկիա) է հասել հայոց թվականի 704 (1255) տարում[70]: Այսպիսով, Հեթում թագավորը Կիլիկիայից մեկնել է «1252 թ. խաչվերացի տոնի օրը» (մարտ ամսին) և Կիլիկիա է վերադարձել 1255 թ. սեպտեմբերի 1-ին, այսինքն նրա ուղևորությունը տևել է երեքուկես տարի, ինչպես այդ մասին վկայում է աստրի հեղինակը։

Խոսելով Հեթում Ա թագավորի՝ Մոնղոլիա գնացող պատվիրակության կազմի մասին, Աբու-լ Ֆարաջը հիշատակում է, մասնավորապես, հայադդի Բարսեղ Վանականին, որը եղել է հայերի դեսպանը (բանագնացը) մոնղոլների մոտ[71]: Այս Բարսեղ Վանական դեսպանի մասնակցությունը Հեթում Ա-ի պատվիրակության մեջ հաստատվում է նաև Կիրակոս Գանձակեցու և Սմբատ Սպարապետի տվյալներով, որոնք վկայում են, որ Բարսեղ Վանականը եղել է Մանգու-խանի մոտ գնացող պատվիրակության մեջ[72]: Սակայն վերադառնալու ճանապարհին Հեթում Ա թագավորը նրան ուղարկում է Բաթու-խանի մոտ, որպեսզի նրան ցույց տա Մանգու-խանի տված դիրը (փաստաթուղթը) և հրամանը, որ վերջինս նոր հրովարտակ դրի Մանգու-խանի տվածին համապատասխան[73]: Աբու-լ Ֆարաջի վկայությամբ, Բարսեղ դեսպանը (վանականը) սպանվել է 1267 թ. Իկոնիայի սուլթանության մոնղոլական կառավարիչ Մուին ադ-դին Փարվանայի սադրանքի հետևանքով[74]:

Հեթում թագավորը Կիլիկիա վերադառնալիս Թալասում հանդիպում է Մանգու-խանի եղբայր Հուլավուին, որը նշանակվել էր մոնղոլական խանության արևմտյան տիրույթների խան և Մերձավոր Արևելքում գտնվող մոնղոլական զորքերի հրամանատար ու այդ երկրների կառավարիչ, և նրան հանձնում Մանգու-խանի ուղարկած գրությունները[75]:

1258 թ. Բաղդադի գրավումից և Աբբասյան խալիֆայության կործանումից հետո Հուլավուն (1256—1265) ձեռնարկում է Միջագետքի մյուս քաղաքների և Սիրիայի գրավումը։ Մոնղոլները նպատակ ունեին Մամլուքներից խլել Սիրիան և Եգիպտոսը և 1259—1260 թթ. այդ ուղղությամբ կազմակերպեցին մի շարք արշավանք-

ներ, որոնք անհաջողության մատնվեցին»: Հուլավուն սկսեց մոնղոլական մեծ խանի անունից կառավարել ամբողջ Իրանը, Իրաքը, Կովկասը և Փոքր Ասիան և ընդունեց «իլ-խան», այսինքն՝ «Մեծ խանին ենթարկվող, հնազանդվող» տիտղոսը և դարձավ Իրանի մոնղոլական պետության՝ իլխանության հիմնադիրը»[77]:

Մասնագիտական գրականության մեջ տիրապետում է այն կարծիքը, որ Հեթում Ա թագավորի մասնակցությունը մոնղոլական նվաճումներին սկսվում է 1259 թ.[78]: Ընդ որում, հայկական աղբյուրները նշում են, որ Հեթում Ա թագավորը մասնակցել է Սիրիայի նվաճմանը Հուլավուի առաջարկությամբ՝ «սուրբ երկիր» արշավելու համար[79]: Սակայն հայկական զորադնդերի հետագա ռազմական գործողությունների մասին հայ պատմիչները լռում են:

Հալեպի գրավման մասին մանրամասն տեղեկություններ են տալիս թե՛ Աբու-լ Ֆարաջը և թե՛ մահմեդական հեղինակները: Ըստ Աբու-լ Ֆարաջի, Հուլավուն իր զորքերի մի մասը ուղարկում է Սիրիայի տարբեր շրջաններ ասպատակելու, իսկ ինքը անձամբ ձեռնարկում է Հալեպի պաշարումը և գրավումը: Մոնղոլական այս գրոհի ժամանակ Հալեպում էր գտնվում հենց ինքը՝ Աբու-լ Ֆարաջը, որը շատ դեպքերի ականատես է եղել: Նա վկայում է, որ մոնղոլական զորքը Հալեպ ներխուժեց սաֆար ամսի 9-ին 658/1260 թ. հունվարի 23-ին, կիրակի օրը և ավելի շատ մարդ սրի քաշեց, քան Բաղդադի գրավման ժամանակ[80]: Նա գրում է. «Այդ ժամանակ նվաստս Հալեպի (ասորիների—Ա. Խ.) մետրոպոլիտ էի: Վախից դրդված դուրս եկա և գնացի Հուլավուին հպատակություն հայտնելու, բայց բանտարկվեցի Նաջմ ամրոցում: Հալեպի մեր (քրիստոնյա) ժողովուրդը մնաց առանց հովվապետի, նրանց մեծ մասը ապաստան գտավ Հալեպի հույների եկեղեցում: Թաթարները (մոնղոլները—Ա. Խ.) հարձակվեցին նրանց վրա, մի մասին կոտորեցին, իսկ մյուսին՝ գերեվարեցին: (Գերեվարած) քրիստոնյաներին փրկելու համար նախաձեռնություն ցուցաբերեց Մար Կոստանդինի (հայոց կաթողիկոսի—Ա. Խ.) եղբորորդի, հայազգի Թոռոս քահանան, որին միացավ նաև Գևորգ Վանականը: Նրանք միասին գնացին մոնղոլների մոտ ու գերությունից ազատեցին կենդանի մնացածներին ու առաջնորդեցին նրանց դեպի մեր եկեղեցին»[81]: Հալեպի գրավման ժամանակ մոնղոլների կողմից սրի է քաշվել 50 հազար բնակչություն[82], որոնց մեջ զգալի թիվ են կազմել նաև քրիստոնյաները:

Վարդան պատմիչը վկայում է, որ Հեթում թագավորի հետ էր գընացել նաև Կոստանդին կաթողիկոսը[83]: Սակայն մահմեդական հեղինակները լռում են Հեթում թագավորի մասնակցության մասին Հալեպի ռազմական գործողություններին, հանդամանք, որը հաղիվ թե վրիպեր ժամանակակից մահմեդական պատմիչների ուշադրությունից. Այնուհանդերձ, արաբ հետազոտողները գտնում են, որ Հեթում թագավորը, էլնելով հայ-մոնղոլական դաշինքի պարտավորություններից, հյուսիսի՝ սելջուկների և հարավի՝ մամլուքների վտանգից, իր թագավորությունը պաշտպանելու համար միացել էր Հուլավուին[84]: Կարելի է ենթադրել, որ Հեթում թագավորը որպես մոնղոլների դաշնակից անձամբ իր զորագնդով չի մասնակցել ռազմական գործողություններին, բայց օգնել է նրանց սննդամթերքով, ձիերով ու հագուստով[85]:

Հալեպի գրավումից հետո Հուլավուի զորքերը շարժվում են դեպի Հարիս ամրոցը, որի բնակիչները մոնղոլական սարսափից դողդղված ապաստան են գտնում բերդում և որոշում են կամավոր չընհանձնվել: Սակայն Հուլավուն կասի մեջ մտնելով ամրոցի կառավարիչ Ֆախր ադ-Դինի հետ, համաձայնության եկավ, որ եթե բնակիչները կամավոր բերդից դուրս գան, ապա մոնղոլ տիրակալը ոչ մեկին ձեռք չի տա, և կառավարիչը երդում տվեց բնակիչներին այդ մասին: Մոնղոլ տիրակալը խաբեությամբ բացել տվեց ամրոցի դարպասները, իր երդումը չհարգեց, ու մոնղոլական զորքը, ինչպես հաղորդում է Աբու-լ Ֆարաջը, սկսեց առանց խտրականության սրի քաշել բոլորին, այդ զանգվածային կոտորածից փրկվեց միայն հայաղդի մեկ դարբնագործ մարդ[86]:

Մոնղոլական տիրակալ Հուլավուն մտադիր էր գրավել նաև Դամասկոսը: Սակայն Դամասկոսի Այյուբյան սուլթան ալ-Նասիրը (1237—1260) որոշեց քաղաքը առանց արյունահեղության հանձնել մոնղոլներին: Այդ մասին բանագնացները պայմանավորվեցին, սակայն Հուլավուն անձամբ Դամասկոս չներկայացավ, այլ հատուկ հրովարտակով (ֆերման) Դամասկոսում պաշտոնյաներ նշանակեց (քաղաքի կառավարիչ, կագի և այլն): Դամասկոսի հանձնումը մոնղոլական ներկայացուցիչներին տեղի է ունեցել 658 թ. ջումադա առաջին ամսվա կեսին (1260 թ. ապրիլի 29-ին)[87]:

Հուլավուն, չավարտելով ամբողջ Սիրիայի ու Պաղեստինի նվաճումը և ստանալով իր եղբոր՝ Մանգու-խանի մահվան (655/

1257 թ.) լուրը, շտապում է Կարակորում։ Նա Սիրիայում 10 հազար զորք է[88] թողնում, հրամանատարություն, ինչպես նաև Հալեպում իրեն փոխարինելու պաշտոնում նշանակելով Քիթբուղա զորավարին, վերջինիս ջնորհելով նոյին (նոյոն) տիտղոսը։ Դամասկոսում փոխանորդ է նշանակվում հրամանատար Բիդրան[89]։

Տեղեկանալով Հուլավուի հեռանալու մասին, Եգիպտոսի Մամլուքյան սուլթան ալ-Մուղաֆֆար Սայֆ ալ-Դին Կութուզը (1259—1260) որոշում է հակահարված տալ մոնղոլական զորքերին, որոնք գրավել էին Սիրիայի մի շարք քաղաքներ և ասպատակել երկիրը։ Մամլուքյան առաջապահ զորքը դուրս է գալիս մոնղոլական ջոկատների գեմ՝ Պաղեստինի Բիսան ու Նաբլուս քաղաքների միջև՝ «Այն Ջալութ» կոչված վայրում (Նազարեթի մոտ), և նրանց միջև առաջին ճակատամարտը տեղի է ունենում 658 ռամադան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3-ին)։ Մոնղոլական զորքը պարտություն է կրում, նրա հրամանատար Քիթբուղան սպանվում է։ Երկու օր հետո զորքերի միջև տեղի է ունենում երկրորդ բախումը, սակայն այս անգամ էլ մոնղոլական զորքը խայտառակ պարտություն է կրում, նրանց «մեծամեծերը» (հրամանատարները) սպանվում են 658 թ. ռամազանի 27-ին (1260 թ. սեպտեմբերի 5-ին)։ Մոնղոլ զորավար Քիթբուղայի գլուխը տարվում է Կահիրե՝ հաղթանակի մասին ավետելու[90]։ Լսելով մոնղոլական զորքի պարտության մասին, Հուլավուն վերադառնում է Սիրիա։ Նրա հետագա ռազմաքաղաքական գործողությունները նկարագրվում են Արու-լ Ֆարաջի թե՛ արաբական և թե՛ ասորական ժամանակագրությունների մեջ[91]։

XIII դարի 60-ական թվականների սկզբից մամլուքները հասել էին քաղաքական ու տնտեսական հզորության գագաթնակետին։ Նրանք փաստորեն կասեցրեցին մոնղոլների հետագա առաջխաղացումը Մերձավոր Արևելքում և կոտրեցին իսլամական աշխարհում մոնղոլների անպարտելիության նկատմամբ առկա համընդհանուր հավատը։ Բացի դրանից, Իրանի իլխանների նկատմամբ մահմեդականների ընդհանուր ատելությունը նպաստեց Մամլուքների և Ոսկե Հորդայի քաղաքական և առևտրական դաշինքի կայացմանը։ Իսկ իլխանները իրենց հերթին փորձեցին կազմակերպել հակամահմեդական դաշինք և իրենց կողմը գրավել Եվրոպայի քրիստոնեական տերություններին, Լևանտի (Մերձավոր Արևելք) ծովափնյա քաղաքների խաչակիրներին և Կիլիկիայի թագավորներին[92]։ Ահա

այս նոր ռազմաքաղաքական իրավիճակում Կիլիկիայի հայկական թագավորությունը շարունակում էր մնալ մոնղոլների գլխավոր պատնեշը Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքների դեմ պայքարում։ Եթե մինչև Բաղդադի գրավումը (1258) ռազմաքաղաքական գերազանցությունը մոնղոլների կողմն էր, իսկ Կիլիկյան թագավորության արտաքին քաղաքականության դիրքորոշումը ելնում էր ուժերի իրական վիճակի հաշվառումից, ապա 1262 թ. հետո այդ քաղաքականությունը, ինչպես արգարացիորեն նկատել է պատմաբան Ս. Բոռնազյանը, հենվում էր խարխուլ պատվանդանի վրա, այսինքն մոնղոլների վրա, որովհետև 1262 թ. իլխանությունը ստիպված էր 15 տարի շարունակ պատերազմել Ոսկե Հորդայի դեմ, որը դարձել էր Եգիպտոսի մամլուքների դաշնակիցը և սերտ հարաբերություններ հաստատել նրանց հետ[93]։

Եվրոպացի հետազոտողների մոտ իշխում է այն տեսակետը, որ Կիլիկիայի հայկական պետությունը մի նահանգ էր, որը մտնում էր Իրանի մոնղոլական իշխանության կազմի մեջ[94]։ Արաբ հետազոտողները ավելի մեղմ տեսակետ են առաջ քաշում։ Մոնղոլական ժամանակաշրջանի հայտնի հետազոտողներ Ֆ. Աշուրը և Հ. Ջայյարը գտնում են, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը 1252 թ. հայ-մոնղոլական դաշինքի բերումով դարձել էր մոնղոլական իլխանության ենթակա, այլ խոսքով, նրա ազդեցության ոլորտում գտնվող պետություն։ Կիլիկիայի Հեթում Ա թագավորը միացել էր մոնղոլ տիրակալ Հուլավուին, հյուսիսի՝ Իկոնիայի սելջուկյան և հարավի՝ Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքյան սուլթաններից իր պետությունը պաշտպանելու նպատակով[95]։

Կիլիկիայի հայկական պետության միջազգային կարգավիճակի մասին վերոհիշյալ տեսակետները ոչ միայն հիմնավորված չեն, այլև չեն դիմանում գիտական քննադատության։ Կիլիկիայի հայկական պետությունը անշուշտ չի մտել Իրանի մոնղոլական պետության՝ իլխանության կազմի մեջ և մնացել է ինքնուրույն և անկախ պետություն[96]։ Սակայն XIII դարի 60-ական թվականներից ուժեղանում է մոնղոլների քաղաքական ազդեցությունը Կիլիկիայի պետության արտաքին քաղաքականության հետագա ընթացքի վրա, քաղաքականություն, որը արդեն չէր ելնում Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմաքաղաքական ուժերի իրական վիճակի հաշվառումից։

Խոսելով Հուլավուի 10-ամյա գահակալության ժամանակ իլխանական պետության մեջ մտնող երկրների մասին, միջնադարյան արաբալեզու հեղինակները ներկայացնում են մի ընդարձակ ցանկ՝ Խորասանը, Իրանական Իրաքը (Ջիբալ), Արաբական Իրաքը, Ֆարս նահանգը, Խուզիստանը, Դիար-Բաքրը, Ռում երկիրը (Փոքր Ասիա) և Կովկասյան երկրները՝ բուն Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը (Շիրվան և Ատրպատական)[97]: Սակայն Կիլիկիայի հայոց պետությունը չի մտնում այդ ցանկի մեջ, այսինքն՝ իլխանության մեջ մտնող երկրների մեջ չի հիշատակվում, հետևաբար, միջնադարյան արաբ պատմիչները Կիլիկյան պետությունը դիտել են որպես ինքնուրույն և անկախ պետություն։

Կիլիկիայի՝ 1260-ական թվականների և հետագա ժամանակաշրջանի ռազմաքաղաքական դեպքերը նոր փուլ են կազմում, որոնց քննությունը նոր ուսումնասիրություն է պահանջում և դուրս է գալիս սույն հոդվածի շրջանակներից։

ALEXANDER KHATCHATRIAN

THE NARRATIVE WORKS OF ABU-L FARAJ IBN AL-IBRI (BAR HEBRAEUS) AS A SOURCE OF THE HISTORY OF CILICIAN ARMENIA (XIII CENTURY)

The investigation of Abu-l Faraj Gregory Ibn al-Ibri's reports in his Syriac «Tarikh al-Zaman» and Arabic «Tarikh mukhlasar al-duwal» chronographies, exposes some not very known or unknown facts about military and political activities of Costantin the Regent after the death of Levon II in 1219 A. D., who ruled for about ten years.

According to Ibn al-Ibri, the internal struggle for the Armenian throne between different princes and kings (Armenian, Greek, Latin etc) had find its end in the year 1226 A. D. by the coronation of Hetum I (1226—1270) and his marriage to Zabel (1226).

The analysis of Ibn al-Ibri's reports allows to revise the date of the first Armenian delegation's journey to Mongolia (1246), headed by Smbat Sparapet (Gundstable) and illustrate the activities of the Armenian ambassador Barsegh the Monk in Mongolia. The second journey of the Armenian delegation to Mongolia (Karakorum), headed by the king Hetum I, was dated to 1252—1255 A. D.

In this paper the author examines the problem of the participation of king Hetum's Armenian troops in the Mongol conquest of Syria in 1259—1260 A. D. as well as the political status of Armenian kingdom of Cilicia with the Mongols (Ilkhans) during the reign of Hetum I, regarding it as a sovereign and independent state.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Տե՛ս* G. Graf, Geschichte der christlichen arabischen Literatur, Bd. 5, Vatican City, 1953—1955, C. Brockelmann, Die Syrische und Christlich-arabische Literatur, Leipzig, 1907:

[2] Х. А. Р. Гибб, Мусульманская историография.—Арабская литература. Классический период. М., 1960, с. 138 (далее: Гибб, Историография).

[3] *Նրա մասին տե՛ս* C. Brockelmann, «Barhebräus».—EI[1], vol. I,Leyden—Paris, 1913, S. 684, J. B. Segal, «Ibn al-Ibri».—EI[3], vol. 2, Leiden—London, 1979, p. 804, G. P. Behnam, Bar Hebraeus's Biography and poems, Aleppo, 1984 (*այսուհետև՝* Behnam, Bar Hebraeus), p. 10, I. Barsoum, History of Syriac Sciences and Literature, with introduction by G. Y. Ibrahim, Aleppo, Syria, 1987 (*այսուհետև՝* Barsoum, History), p. 413; Р. Гусейнов, Сирийские источники), с. 55; И. Ю. Крачковский, Арабская географическая литература.—Избранные сочинения, т. 4, М.—Л., 1957, с. 373—374; Н. В. Пигулевская, Культура сирийцев в средние века, М., 1979, с. 109.

[4] Ibn al-Ibri Gregorius, Tarikh Mukhtasar al-duwal, edited by A. Salihani, Beyrouth, 1958 (*այսուհետև՝* Tarikh Mukhtasar), P, J, Segal' «Ibn al-Ibri», p. 804, Behnam, Bar Hebraeus, p. 14—15:

[5] Abu al-Faraj Jamal al-Din Ibn al-Ibri, Tarih al-Zaman, d'apres la traduction arabe du p. Ishaq Armaleh, introduction du F. Jean-Maurice Fiey, Beyrouth, 1986 (*այսուհետև՝* Tarih al-Zaman), p. 297, Tarikh Mukhtasar, p. D. Behnam, Bar Hebraeus, p. 21—22, Brockelmann. «Barhebräus», S. 674, Гусейнов, Сирийские источники, с. 55.

[6] *«Մաֆրիանը»—Հակոբիկ ասորական եկեղեցու արևելյան թեմերի առաջնորդի պաշտոն (տիտղոս) է, որը ստեղծվել է դեռևս 630 թ.։ Մաֆրիանի իրավասության տակ էին գտնվում 18 եպիսկոպոսական թեմեր (տե՛ս Անանուն Եդեսացու ժամանակագրություն, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 234 (ծան. 489)։*

[7] Tarih al-Zaman, l. 12, Tarikh Mukhtasar, p. D-H, Behnam, Bar Hebraeus, p. 21—35, Segal, Ibn al-Ibri, p. 804—805, Brockelmann, Barhebräus, S. 674—675; Гусейнов, Сирийские источники, с. 55—56.

[8] Gregorii Abul Pharagii sive Barhebraei Chronicon syriacum e codiciis Bodleianis descripsit maximam partem vertit notisque illustravit, P. J. Bruns... edidit ex parte vertit notasque adiecit G. G. Kirsch, Lipsiae, 1789:

[9] Gregorii Barhebraei. Chronicon ecclesiasticum. Quode codice musei Britannici descriptum conjuncta opera ediderunt, latinitate donarunt annotationibusque theologicis, historicis, geographicis et archeologicis illustrarunt I. B. Abbeloos et T. I. Lamy. Sectio prima, t. I, Lovanii. 1782. t. II. Parisiis—Lovanii, 1874, Sectio secunda, t. III, Parisiis—Lovanii, 1877:

[10] Ibn al-Ibri Grigorius, al-Tarikh al-Kanasi. Naqalahu ila al-arabiya Bikhtisar al-abb Ishaq Armaleh, Beyrouth,—«al-Mashriq», mujallad 21 (1923), ss. 494—507, 589—599, 660—671, mujallad 22 (1924), ss. 182—192, 272—281, 364—372, 417—427, 519—527, 604—614:

[11] Tarih al-Zaman, p. 10 (arabic texte p. 18):

[12] Historia compendiosa dynastiarum authore Gregorio Abul-Pharajio, Malatiensi Medico ... Arabice edita latine versa ab Eduardo Pocockio, Oxoniae (Oxford), 1663, *նույնի՝* Specimen Historiae Arabum, sive Gregorii Abul Farajii .. de origine et motibus Arabum ... Opera et studio Edvardi Pocockii, Oxoniae. 1650:

[13] Historia Saracenica ... Arabice olim exarata à Georgio Elmacino ... et Latine reddita opera et studio Thomae Erpenii, Lugduni Batavorum (Leiden), 1625:

[14] Jirji Zaidan, Tarikh adab al-lughati al-arabiyati, âl-jiz' al-salis al-Qahira, Dar al-Hilal, s. 215; В. В. Бартольд, Туркестан в эпоху монгольского нашествия.—Сочинения, т. I, М., 1963, с. 46.

[15] Historia compendiosa dynastiarum authore Gregorio Abul Pharajio.... ed. E. Pocock, Oxford, 1663; *հմմտ.* Tarih al-Zaman, p. 7, 18—19, Tarikh Mukhtasar, p. W, Segal, «Ibn al-Ibri», p. 805:

[16] Tarih al-Zaman, p. 10 (arabic texte p. 19), *հմմտ.* Tarikh Mukhtasar, p. W:

[17] Das Gregorius Abulfaradsch kurze Geschichte der Dynastien oder Auszuder allgemeinen Weltgeschichte besonders der Geschichte der Chalifen und Mongolen über von G. L. Bauer, Bd. 1—2, Leipzig, 1783—1785:

[18] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, first edition, Beirouth, 1890 (*Այսուհետև՝* Tarikh Mukhtasar).

[19] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, Second edition, Beirouth, 1958:

[20] Grigorius al-Malati Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar al-duwal, edited and annotated by Anton Salihani, Third edition, Beirout, 1983:

[21] Tarih al-Zaman, p. 8, 13:

[22] *Նույն տեղում, էջ 14։*

[23] Tarih al-Zaman, p. 258, *հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976 (այսուհետև՝ Հայ ժողովրդի պատմություն, 3), էջ 695։*

[24] Tarih al-Zaman, p. 258—262:

[25] *Նույն տեղում, էջ 258, 262։*

[26] *«Հաշիշեացոն» ասելով Սմբատ Սպարապետը նկատի ունի Ասորիքի (1100—1273) և Իրանի (1090—1256) իսմայիլականներին (ասասինիներին), որոնք խի-*

զախ ահաբեկչական գործողություններ կատարելու համար, իբր թե, օգտագործում էին «հաշիշ» թմրաբույսը՝ զգայախաբություն առաջացնելու նպատակով։ Հենց «Հաշիշ» թմրաբույսի (թմրագեղի) անունով էլ իսմայիլիականներին սկսեցին անվանել «Հաշշաշին» կամ «Հաշիշիյին» (հաշիշ օգտագործողներ), սակայն այս վարկածը չի հաստատվում իսմայիլական աղբյուրներով (տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Пер. с англ. и прим. П. А. Грязневича, М., 1971 (այսուհետև՝ Босворт, Мусульманские династии) с. 176):

27 Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871 (այսուհետև՝ Միքայել Ասորի), էջ 50, հմմտ. Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956 (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ, 1956), էջ 223։

28 Tarih al-Zaman, p. 262:

29 Վ. Ա. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145—1226 թթ., Երևան, 1994 (այսուհետև՝ Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը), էջ 126, 129, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 695։

30 Tarih al-Zaman, p. 262:

31 «Վահրամ Ռաբունի, Պատմութիւն Ռուբինեանց», Փարիզ, 1859, էջ 217—218, Միքայել Ասորի, էջ 515—516, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 696։

32 Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 128։

33 Tarih al-Zaman, p. 262:

34 Մասնագիտական գրականության մեջ այն խորհրդաժողովը, որը Ֆիլիպին Կիլիկիայի թագավոր է հռչակել, թվագրվում է 1222 թ. (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 696, Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 128—129)։ Սակայն Աբու-լ Ֆարաջի բերած 618/1221 տարեթիվը ավելի կոնկրետ և համոզիչ է թվում, հմմտ. Հ. Ժամկոչյան և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն սկզբից մինչև XVIII դարի վերջը, Երևան, 1975 (այսուհետև՝ Ժամկոչյան), էջ 528։

35 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), էջ 189։

36 Tarih al-Zaman, p. 262—263:

37 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, Կիրակոս Գանձակեցի, էջ 189։

38 Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 129։

39 Ibn al-Athir, al-Kamil fi al-Tarikh, vol. XII, Beirouth, 1982, p. 464—466; հմմտ. Իբն ալ-Ասիր. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), էջ 331—332։

40 Ibn al-Athir, al-Kamil, v. XII, p. 465, հմմտ. Իբն ալ-Ասիր, էջ 332։

41 Ibn al-Athir, al-Kamil, v. XII, p. 465—466, հմմտ. Իբն ալ-Ասիր, էջ 331—332։

42 Նույն տեղում։

43 1225—1226 թվականների Կիլիկիայում ընթացող ռազմաքաղաքական դեպքերի մասին տե՛ս Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը, էջ 130—134։

44 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 225, Միքայել Ասորի, էջ 506, Կիրակոս Գանձակեցի, էջ 189, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 697։

[45] Կիրակոս Գանձակեցի, էջ 189։

[46] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 698։

[47] Նույն տեղում։

[48] Tarih al-Zaman, p. 271:

[49] Այդ մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, էջ 693—699, Ժամկոչյան, էջ 528—529։

[50] Նույն տեղում, էջ 699—701։

[51] Tarikh Mukhtasar, p. 256—257, Tarih al-Zaman, p. 291:

[52] Tarih al-Zaman, p. 291:

[53] Tarikh Mukhtasar, p. 256—257. հմմտ. Армянские источники о монголах. Извлечения из рукописей XIII—XIV вв. Перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, М., 1962 (далее: Армянские источники, с. 71.

[54] Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 529։ Պատմաբան Ս. Բոռնաղյանը բերում է 1246 ճիշտ տարեթիվը (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, էջ 701. հմմտ. Армянские источники, с. 48, 121 (прим. 139).

[55] Կիրակոս Գանձակեցի. էջ 317—318, 364. «Մաղաքիա արեղայի Պատմութիւն վասն ազգին Նեստորաց» Պետերբուրգ, 1870, էջ 17։

[56] Tarikh Mukhtasar, p. 257:

[57] Գրիգոր Ակներցի (Մաղաքիա աբեղա), էջ 17, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 701։

[58] Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 317—318, 364, Գրիգոր Ակներցի (Մաղաքիա Աբեղա) էջ 17, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 701։

[59] Ա. Գ. Սուքիասյան. Կիլիկյան հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 73, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 703, Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 530։

[60] Tarikh Mukhtasar, p. 262, Tarih al-Zaman, p. 297:

[61] Tarih al-Zaman, p. 297:

[62] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 703։

[63] al-Maqrizi, Ahmad, Kitab al suluk limarifat duwal al-muluk, edited by Muhammad Mustafa Ziada, vol. 1, part 2, Second edition, Cairo, 1957 (Այսուհետև՝ Maqrizi, al-suluk), p. 283 (note 2), Tarikh Mukhtasar, p. 261, Tarih al-Zaman, p. 295—296:

[64] Босворт, Мусульманские династии, с. 194, 192.

[65] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 703. Ժամկոչյան. նշվ. աշխ., էջ 530, Армянские источники, с. 48, 71:

[66] Tarih al-Zaman, p. 297:

[67] Tarikh Mukhtasar, p. 262—263. Tarih al-Zaman, p. 297—298:

[68] Tarikh Mukhtasar, p. 263:

[69] Tarih al-Zaman, p. 320:

[70] Կիրակոս Գանձակեցի, էջ 372։ Հեթում Ա թագավորի վերագաբձ Կիլիկիա Սմբատ Սպարապետը թվագրում է 705 (1256) թվականի սեպտեմբեր ամսով (տե՛ս Армянские источники, с. 49):

[71] Tarih al-Zaman, p. 326:

[72] Կիրակոս Գանձակեցի, էջ 366, 370, հմմտ. Армянские источники, ст. 48, 71։

[73] Նույն տեղում։

[74] Tarih al-Zaman, p. 326, 334:

[75] Կիրակոս Դանձակեցի. էջ 368, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 706, ժամկոչյան. նշվ. աշխ., էջ 531։

[76] B. Spuler, «Ilkhans».—EI3, vol. 3, Leiden—London, 1979, p. 1121:

[77] Ph. Hitty, History of the Arabs, Fifth edition, London, 1951, p. 488; Босворт, Мусульманские династии, с. 201.

[78] F. H. Ashur, The political relation between the Mamluks and the Monghols at the first mamlukide state. Introduction by Josef Nasim, Cairo, Dar al-Maarif, 1976 (Այսուհետև՝ Ashur, Political relations), p. 40, 90, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 706—707, ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 531։

[79] Տե՛ս Армянские источники, с. 53; Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 706—707, ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 531։

[80] Tarikh Mukhtasar, p. 279: Արար մահմեդական պատմիչներ Աբու-լ Ֆիդան. Մոսկվիգին, Իբն ալ-Վարդիի Հալեպի գրավումը մոնղոլների կողմից թվագրում են 658 թվականի սաֆար ամսի 9-ով (1260 թ. սեպտեմբերի 26-ը), ընդ որում Հալեպի գրավման և նրա բերդի ներխուժման տարբեր թվականներ են բերվում տե՛ս Abu-l Fida Ismail, al-Mukhtasar fi akhbar al-bashar (=Tarikh Abu-l Fida), part 3, Beirouth, Dar al-Maarif, p. 200—202, 209, Maqrizi, al-Suluk, 1/2, p. 422—423, Ibn al-Wardi, Tatimmat al-mukhtasar fi akhbar al-bashar, edited by A. R. Badrawi, part 2, Beirouth, 1970, p. 292—294):

[81] Tarih al-Zaman, p. 316:

[82] Hitty, History of the Arabs, p. 487:

[83] Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական ի լոյս ընծ. Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 198. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 707. ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 531։

[84] Maqrizi al-Suluk, 1/2, p. 510 (note 1), Ashur, Political relations, p. 83:

[85] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 707։

[86] Tarikh al-Zaman, p. 316:

[87] Դամասկոսի հանձնման մասին մանրամասն տե՛ս Maqrizi, al-Suluk, 1/2 423—424. Abu-l Fida, Tarikh, III, p. 203, Abu Shama, al-Zail, ala raudatain, introduction by Muhammad Zahid Ibn al-Hasan al-Kathari, Beirouth, Dar al-Jil, 1974, p. 203—204:

[88] Կիրակոս Գանձակեցին, որը գովեստով է խոսում մոնղոլների մասին. նշում է, որ Հուլավուն Սիրիայից հեռանալով այնտեղ թողել էր 20 հազարանց զորք (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 388)։ Սակայն Աբու-լ Ֆարաջի նշած 10 հազար թվաքանակը (տե՛ս Tarih al-Zaman, p. 317, Tarikh mukhtasar, p. 280) ավելի հավանական է թվում։

[89] Maqrizi, al-Suluk, 1/2, p. 427, Abu-l Fida, Tarikh, III, p. 205, Ibn al-Wardi, Tatimmat al-mukhtasar fi akhbar al-bashar, ed. by A. R. Badrawi, part 2:

[90] Maqrizi, al Suluk, 1/2, p. 430—431, Abu-l Fida, Tarikh, III, p. 205, Abu Shama, al Zail, p. 207—208, Ibn al-Wardi, Tatimmat, II, p. 297:

[91] Tarih al-Zaman, p. 317, Tarikh Mukhtasar, p. 280:

[92] Босворт, Мусульманские династии, с. 201.

[93] Hitty, History of the Arabs, p. 487, Босворт, Мусульманские династии, ст. 201, *Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 707։*

[94] C. Cahen, «Arminiya»,—EI³, vol. I, Leiden—London, 1979, p. 660, B. Spuler, «Ilkhans», EI³, vol. III, Leiden—London, 1979, p. 1121, The Cambridge Medieval History, vol. IV, London, 1927, p. 175:

[95] Maqrizi, al-Suluk, 1/2, p. 510 (note 1), Ashur, Political relations, p. 83:

[96] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 705, 708։*

[97] Maqrizi, al-Suluk, 1/2, p. 541 (note 4), Abu-l Fida, Tarikh, IV, p. 3, Ashur, Political relations, p. 90; Босворт, Мусульманские династии, с. 201.